ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հոկտեմբերի 2016 թվականի N 241-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012 թվականի մարտի 20-ի N 194-Ն, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2012 թվականի ապրիլի 11-ի N 323-Ն, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2012 թվականի մարտի 26-ի N 32-Ն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2012 թվականի մարտի 21-ի N 1-Ն, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենի 2012 թվականի ապրիլի 4-ի N 1-Ն և Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 2012 թվականի մարտի 24-ի N 5-Ն համատեղ հրամանով հաստատված հավելվածի 4-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի պահանջների՝ **որոշում եմ.**

1. 2016-2017 ուսումնական տարվա *<<Տարվա լավագույն զինվորական ղեկավար և լավագույն քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ>>* մրցույթի մարզային փուլի անցկացման նպատակով ստեղծել մարզային հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

1) ***Հերմինե Ադամյան*** - նախագահ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատար,

2) ***Կարեն Մաղաքյան*** - անդամ, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշպանության բաժնի պետ-վարչության պետի տեղակալ, փրկարարական ծառայության փոխգնդապետ *(համաձայնությամբ)*,

3) ***Սարգիս Ասատրյան*** - անդամ, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայություն Կոտայքի մարզային վարչության աշխատակից *(համաձայնությամբ)*,

4) ***Հասմիկ Մակարյան*** - անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ:

2. Հանձնաժողովին՝ մինչև *2016 թվականի նոյեմբերի 15-ը* ներառյալ ներկայացնել նախնական զինվորական պատրաստության և անվտանգ կենսագործունեության ուսուցիչների անձնական գործերը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2016 թվականի հոկտեմբերի 17
ք. Հրազդան